



Վայրկեան մը մոռնանք 2005-ը եւ անցնինք աւելի ճակատագրական թուականի մը, ուր հայութեան համար, արտօնեցէք անգլերէնով ըսել **MAKE OR BREAK** տարի մը պիտի ըլլայ:

Այս ալ 2015 թին է: Լաւ մտածենք թէ ուր պիտի գտնուինք տաս տարի ետք: Ծառ հեռու չէ, բայց շատ ալ մօտ չէ:

Եթէ Աստուած կամի, եւ առողջութիւնս արտօնէ, մազերս քիչ մը ալեհեր, Ապրիլ 24, 2015-ին պիտի արթննամ, եւ տունէս դուրս եկած պահուս, ինչպէս ամէն առաւօտ երբ զաւակներուս դպրոց կը կասցնեմ, զիս պիտի դիմաւորէ նորէն Աթիլլային կիսալուսինն ու աստղը, որ կը գտնուի թուրքերու կողմէ գրաւած Գիրենիոյ լեռնաշղթային հարաւային լանջին:

Մեծ աղջիկս կամ հասած պիտի ըլլայ իր համալսարանական ուսման աւարտին, կամ ալ գործի ասպարէզի անցած պիտի ըլլայ այլեւս:

Իսկ փոքրս ալ, այն ատեն պիտի ըլլայ ուսանող Մը, հաւանաբար յեղափոխական զգացումներով լեցուն, ինչպէս գրեթէ բոլոր քսաննոց համալսարանականները: Եւ վստահաբար օր մը ինծի պիտի հարցնէ, թէ **Daddy, what is April 24<sup>th</sup>?**

Ես ալ ամչնալով, հայերէնս մէկ կողմ պիտի ձգեմ եւ պիտ ըսեմ իրեն. **It's the day we lost our pride.**

Որովհետեւ սիրելիներ, իմաստ չունի, ո՛չ Յեղասպանութեան մասին խօսելնիս, ո՛չ ազգին փրկութեան մասին, ո՛չ ալ Մեսրոպեան ոսկեայ գիրերուն մասին. երբ Յունիսի աւարտին կը փակուի Մելգոնեանը: Ո՛չ միայն պարզ կրթական օճախ մը, այլ վերջին պարիսպը, վերջին միջնաբերդը, որ կը պաշարի բանթուրանական անհռելի ծրագրին դէմ:

Ծառ խօսքեր լսած եմ այս վերջին շրջանին, թէ դուք շատ զգացական պատճառներով համար կ'ուզէք Մելգոնեանը բաց պահել: Բարեկամներ, մէկդի դնենք մեր ետը, եւ սկսինք խօսիլ յաջողակ սերունդներուն մասին:

*Մելգոնեանս*

Անոնք որոնք շահ մը ունէին, արդէն իսկ կերած խմած են: Կը յուսամ որ կշտացան, որպէսզի ընդմիջտ մեկնին եւ մենք անվարան քալենք դէպի նոր ութսունամեակ մը, նոր Մելգոնեան մը: Կառուցելու թափանցիկութեան եւ արդարութեան վրայ հիմնուելով:

Այսօր Մելգոնեանը, բոլոր այն կորսուած ու լնացած գաղութներուն, որպէս լուսաւոր փարոս, իր առաքելութիւնը կը կատարէ ամենայն գիտակցութեամբ: Փոքրիկներ ու պատանիներ կու գան, որոնց մայր լեզուն ըլլալով պուկարերէն, յունարէն, ալպաներէն, սպաներէն եւ հուսերէն, մելգոնեանցի ըլլալէ ետք, կը մեկնին հոնկէ որպէս մէջ մէկ հպարտ հայախօս պատանիներ: Ասոնք են որ պիտի պաշտպանեն հայկական դատը, եւ ոչ թէ Նիւ Եորքի պալատներուն մէջ, կաշի թիկնաթոռներու վրայ բազմած, չակերտեալ ղեկավարներ, որոնք կը կարծեն թէ իրենց «չէք պուքերով» կրնան բերաններ բանալ եւ բերաններ գոցել:

Այո, երբ Մելգոնեանի ընդարձակ հողամասը պաշտպանուած հռչակեց Կիպրոսի կառավարութիւնը, իրենց գրպանին դպաւ: Շատերու երազները սկսան ոչնչանալ: Ինչ որ 80 միլիոն տղարնոց պուրակ մըն էր, այսօր զերոյի իյնալու վախը կայ, սակայն դպրոցը պիտի մնայ կանգուն, ինչպէս որ յոյները մեզի կ'ըսեն. «Իբրեւ պայքարի յուշարձան մը թուրքին դէմ»:

Մեզի կ'ըսուի թէ Մելգոնեանը ի՞նչ մտաւորական մէջտեղ Բերած է վերջին 20 տարիներու ընթացքին: Ուրեմն ասո՞ր համար գոցենք: Թերեւս այս դպրոցը կարողութիւնը չունեցաւ նոր Վահան Թէքէեան մը ծնելու, կամ Սիլվա Կապուտիկեան մը, բայց արդեօ՞ք այդ էր Մելգոնեանի գլխաւոր առաքելութիւնը: Միթէ՞ Կլէմտէլէն ելած է նոր Ուիլեամ Սարոյեան մը, թէ ոչ Փիթըր Պալաքեան յաջողած է ՈՐՈՎՀԵՏԵԻ Մելգոնեան չէ յանախած. ուրիշներ են որ անարդար ու անհաւասար կեցուածք մը պահած այս դպրոցին հանդէպ: Կարծես թէ Գալիֆորնիոյ դպրոց մը ատելի սիրուած է, քան Կիպրոսինը, կամ Լիբանանինը, կամ Յունաստանինը: Քանի անգամ մենք՝ Սանուցը, դիմած ենք օգնութեան ձեռք մը երկարելով, բայց մերժուած: Կիպրոսի

մէջ մենք քանի անգամ առաջարկներ բերած ենք, բայց խուլ ականջներու հանդիպեցանք միայն: Նույնիսկ միջնորդներ գտանք դպրոցին ծախսերը պակսեցնելու, բայց ժխտելով ժխտեցին որակաւոր դաստիարակութիւնը: Նորէն, ոչինչ:

Եւ անոնք որ ուրիշներ կը քննադատեն մսխումներու մասին, իրենք առաջին իսկ մսխումներն են, քանի որ մասնակից դարձած են այս անհրաւութիւններուն:

Այսօր այս Սուրբ Միութեան, որուն մենք կուրօրէն հաւատացած ենք եւ եղած ենք շարքային զինուորները անոր; բարեգործակա՞նք բանակին հիմերը սկսան են դողալ: Մի՛ մոռնաք, որ մենք ենք անդամները այս Միութեան, մենք մեր ձեռքերով կառուցեցինք, որովհետեւ մեր ամէն մէկ տոլարը որ ճակտի քրտինքով շահեցանք ու նուիրեցինք, աւելի արժէք ունի քան ուրիշի մը միլիոնը:

Մեզի աւելի կը ցաւցնէ թէ ստիպուած ենք իրաւաբաններ գտնել, պատմական թուղթեր գտնել եւ դատարանները վազել: Բայց կազմակերպութեան վերին մարմինը ուրիշ էլք չտուաւ, եւ պիտի շարունակենք մինչեւ որ այս անհրաւութիւնը վերցուի եւ Մելգոնեանը սկսի ոչ թէ 200 այլ 400 եւ 500 աշակերտ ընդունիլ, ասոնց տալով հայեցի դաստիարակութիւն եւ որակաւոր կրթութիւն: Այս առնչութեամբ արդէն իսկ հակիրճ ծրագիր մը պատրաստուած է ներկայացնելու Ի մասնաւորի Հանրապետութեան Նախագահին եւ Կրթական նախարարին եւ խորհրդարանի բոլոր անդամներուն: Մանաւանդ որ այսօր Կիպրոսը երրոմիութեան կը մասնակցի որպէս լիիրաւ անդամ, ուր շնորհիւ կիպրացի յոյն երեսփոխաններու աշխատանքներուն երոպահայութեան կողքին հայերէն լեզուն ստացաւ «տարածքային փոքրամասնութեան լեզու» ճանաչումը: Այս ալ շնորհիւ Մելգոնեանի պէս կառուցի մը:

Ինչպէ՞ս ընդունիլ որպէս պատմութեան մէկ հեքնանքը, երբ Կիպրոսի կառավարութիւնը եւ խորհրդարանը փակման որոշումէ կը նկատէ թշնամական արարք. իսկ մեր մտաւորականներէն մեծամասնութիւնը եւ ազգային ղեկավարներ կը մնան լուռ: Կիպրոսի

կառավարութիւնը այսօր կու գայ այս դպրոցին կողքին կանգնելու, կարծես յարգանքով խոնարհելու բարերարներու զոյգ կիսանդրիներուն առջեւ, որոնք ամէն օր խորհրդաւոր կերպով կը դիտեն մայրամուտը: Մինչ անդին, հարիւրաւոր մայրի ծառեր, որոնք 1915-ի որբերուն կողմէ ցանուած ու գուրգուրանք ցուցաբերած են, ասպետներու նման պահապան կը կանգնին բոլոր տեսակի փորձանքներուն դէմ: Արդեօ՞ք գիտէին թէ թշնամին ոչ թէ հիւսիսէն այլ արեւմուտքէն պիտի գայ:

Ուրեմն եկէք միասնաբար մտածենք, թէ Ապրիլ 24-ը ինչպէ՞ս կ'ուզէք նշել. դո՞ւք ալ կ'ուզէք որ ան ձեր վերջինը ըլլայ:

Ասախ Տէր Բարթող  
Կիպրոսի Աւանց Արհ-բ  
Քոյն Ապետապետ